



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-10-Ո-21  
2007թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ*      *Հ.Մանուկյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ*

*Վ.Աբելյանի, Ս.Անտոնյանի,  
Տ.Բարսեղյանի, Ա.Թումանյանի,  
Ա.Խաչատրյանի, Մ.Մարտիրոսյանի,  
Լ.Մեհրաբյանի, Հ.Մովսեսյանի,  
Տ.Պետրոսյանի, Մ.Միմոնյանի,  
Ն.Տավարացյանի*

*քարտուղարությամբ*

*Մ.Հարթենյանի*

2007 թվականի հոկտեմբերի 31-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Տիգրան Սահակյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով,

## Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության Նախագահին առաջարկել Տիգրան Սահակյանի թեկնածությունը՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ